«Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված աճուրդի մասին հրապարակային ծանուցում

2026-11-20 12:16:51

Հայտատու	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդված

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 08.12.2026թ., ժամը 12:00-ին, ք.Երևան, Սայաթ-Նովա պող., 40շ, 82/31 հասցեում՝ նշված մեկնարկային գնով, այնուհետև՝ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի նույն վայրում, նույն ժամին, յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օր՝ կիրառելիության դեպքում նվազեցված արժեքով, բայց ոչ պակաս հատման գնից: Աճուրդի ավարտը՝ 30.12.2027թ.-ին:
Աճուրդի կազմակերպիչն է «ԲիԷսԹի» ՍՊԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետևյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «դասական» եղանակով:
Աճուրդի պայմաններն են.
1. Լոտ՝
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամաս, Հայ Ֆիդայիների փողոց, թիվ 58/1 հասցեում գտնվող 0,19 հա հողամաս,
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամաս հասցեում գտնվող 2,16 հա հողամաս,
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Հայ Ֆիդայիների փողոց, 58/3 հասցեում գտնվող 198,93 ք.մ. քարի մշակման արտադրամաս (որոշ հատվածը անավարտ է, իսկ որոշ հատվածի ավարտվածության աստիճանը 50%-80%) և 0,0246 հա հողամաս,
- Բետոնախառնիչ կայան՝ 1600L 80 KW CAMELWAY HZS50, 35/0 NE-35.ME I: PRGU2427729,
- Ցեմենտի բունկեր 65 տոննա,
- Ջրի բակ 10 տոննա:
Լոտի մեկնարկային գին՝ 920000000 (ինը հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ:
2. Լոտ՝
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամաս, թիվ 200/1 հասցեում գտնվող 269,87 ք.մ. բնակելի տուն և 0,0445 հա հողամաս,
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամաս,

200/2 հասցեում գտնվող 133,86 ք.մ. բնակելի տուն և 0,01748 հա հողամաս։
Լոտի մեկնարկային գին՝ 62000000 (վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամ։
3. Լոտ՝
- ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Վանատուր թաղամաս, Զ.Անդրանիկի պողոտա, 58/2-58/4 հասցեում գտնվող 222,97 ք.մ. առևտրի սպասարկման կետ և 0,012 հա հողամաս,
- Սառնարան ARIADA,
- Վառարան UNOX։
Լոտի մեկնարկային գին՝ 73000000 (յոթանասուներեք միլիոն) ՀՀ դրամ։
4. Լոտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր ք., Մ. Մկրտչյան փողոց, 19 հասցեում գտնվող 88,14 ք.մ. հիմք և 0,446 հա հողամաս։
Լոտի մեկնարկային գին՝ 300000000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ։
5. Լոտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, Հրազդան ք., Հարավային թաղամաս, Զ. Անդրանիկի պողոտա, 2 հասցեում գտնվող 373,68 ք.մ. ռեստորան, 274,13 ք.մ. ռեստորան, 236,45 ք.մ. ռեստորան և 0,3211 հա հողամաս։
Լոտի մեկնարկային գին՝ 800000000 (ութ հարյուր միլիոն) ՀՀ դրամ։
6. Լոտ՝
- FELDBINDER SILONACZEPA 34.3, թողարկման տարեթիվը ՝1994թ.,
- MAN TGX 18.440, թողարկման տարեթիվը ՝2008թ.։
Լոտի մեկնարկային գինը՝ 25000000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ։
Լոտերը գրավադրված են։
Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով,
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ և Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական, որը հաստատելու է նաև նախավճարի մուծման փաստը,
իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրություն, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայական, պաշտոնատար անձի և կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը և լիազորությունները հաստատող փաստաթուղթ, մասնակցի վկայական։
Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը։ Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը և Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը։ Սահմանված ժամկետում վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ։ Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ և չափաբաժիններ՝ վաճառողի և գնորդի կողմից համապատասխան

փոխհամաձայնությամբ:
Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է Կազմակերպչի 2470103374150000 հաշվեհամարին, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:
Լոտերին կարելի է ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու և վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին:
Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ և լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար զանգահարել ստորև նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորև նշված կայքերը:

37411564513
llcbst@yahoo.com
ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 82/31